

## ՀԱՆԴԻՍ ԲՆԱԿԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻՔ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՄՀԻ

—

ՀԱՅՈՒԱԾ ԵՒ ՄՆՈՒՆԴ ԲՈՒՏՈՑ

**Գետնին տարերաց անհաւասար կամ այլևայլ խառնուրդով կազմուածն՝ բուսոց ալ կերպարանաց զանազանութիւն կը պատճառէ . սննդառութեան զանազան քիմիական սկզբունքներ՝ ի հարկէ այսպէս կ'ընեն : կալամինեան՝ ըսուած մանուշակն՝ զինկի հանքաց մօտ այնքան կերպարանափոխի՝ որ նոր տեսակ մը կընայ կարծուիլ : ինչպէս որ նիւթոց և բուսոց կենաց մէջ յարաբերութիւն մը կայ , այսպէս ալ նիւթոց և բուսոց ձեին մէջ . ուստի կընայ ըսուիլ թէ բուսոց ձեն՝ նիւթոց և զօրութեան արգասիք մ'է . ասկէց է բուսական արարածոց այնքան բազմազան կերպարանքն և տարբեր տարբեր կերպով սերմանուիլն :**

Բուսոց կերպարանին որոշակի ճանչնալու համար՝ պէտք է անոնցմէ դուրս անհարթ անգործարան մարմնոց աճումը դիտել , վասն զի աւելի դիւրաւ աչքի տակ կ'ընկնի : Յայտնի է ուսումնական դիտողութեամբ որ որ և է նիւթ երբ բիւրղանայ՝ իրեն որոշեալ ձեր կ'առնու . օրինակի համար զուգեկութեամբ սոտայի և ջրածնական քլորուտ թթուի՝ կը գոյանայ կերակրոյ աղն՝ խորանարդ ձեռվով : Բայց ինչպէս որ բուսական կամ կենդանական արարածոց մէջ՝ անսովոր կամ հրէշային երևոյթ մը՝ պատճառ կ'ըլլայ գործարանաց կազմուածքն աւելի լաւ հասկընալու , այսպէս ալ եթէ բիւրղաց մէջ անկանոնութիւն մ'երեի . և յիրաւի , կը տեսնեմք՝ որ մի և նոյն նիւթն՝ տարբեր

1 Կալամին՝ կպրախառն քար մ'է :

հանգամանգ՝ տարբեր ալ կերպարանք կ'առնու , և երկու տեսակ բիւրեղ կը կազմէ : Օրինակի համար՝ կրի ածխուտն սովորական բարեխառնութեամբ կը բիւրղանայ սբաթի կերպարանաւ , իսկ տաք ջրով՝ հատուածակողմի կերպարան կ'առնու . այսպէս աղն ալ որ զուտ ջրի մէջ խորանարդ կը բիւրղանայ , երբ ջրին մէջ միզիտ (սրէ) խառնուի՝ ութանիստ կ'ըլլայ . իսկ թէ ոսկեբորակ թթու խառնուի՝ խորանարդէ և ութանըստէ խառն ձեւ մը կ'առնու : Աւելի զարմանալի է բիւրղացման ժամանակին չափով՝ կերպարանաց ալ փոփոխութիւնն . ինչպէս , պաղեղն՝ անլոյժ բնածխուտով եփուած դանդաղ բիւրղանալով՝ նախ ութանիստ , յետոյ խորանարդ կ'ըլլայ . եթէ առանձին առանձին այս երկու ձեռվով բիւրեղներն ալ լուծուին և քիչ քիչ շոգիացուին՝ երկուքն ալ իրենց սկզբնական ձեր կ'առնուն . եթէ մէկտեղ լուծուին հաւասար մասն խորանարդի և ութանըստի , և լուծման մէկ մասն շուտ շուտ շոգիացուի մէկալը դանդաղ , նախ ութանիստ մը կը կազմուի , յետոյ խառն ութանըստի և խորանարդի , վերջը միայն խորանարդք . իսկ եթէ դարձեալ այս խորանարդ-ութանիստերն լուծուին և թողուին դանդաղ շոգիացման՝ մի և նոյն հեղուկին մէջ կը ձեանան թէ խորանարդք և թէ ութանիստք իրարմէ զատք և որոշք :

Այս բաներէս յայտնի կ'ըլլայ որ բիւրղաց ձեսերուն ներգործիչքն են ոչ միայն քիմիական հանգամանք , այլ և բնականքն , որ են միջոց , ժամանակ , ջերմութիւն , նա և դիրքն իսկ : ինչ որ անգործարան նիւթոց վրայ կ'ըլլայ բիւրղացմամբ՝ նոյնն կ'ըլլայ նաև աւելի ազատ , ընդարձակ և խառնակներու

կերպով մը գործարանաւոր արարածոյ կազմութեան . և որչափ բարձրագոյն աստիճանի կամ կատարելագոյն ըլլան արարածք՝ այնքան աւելի կատարեալ և որոշ են բիւրղացմունքն . մինչդեռ ամենէն ստորին կամ նախնական բուսոց բիւրեղքն անկարգ իմն և դեռ անգործարանաց նման կ'երեին , կատարելագոյն բուսոց բիւրեղք կանոնաւոր կերպով մը իրարու յարմարելով՝ կը կազմեն կարգաւորեալ բովանդակ մը , շարք մը գործարանաւոր բիւրեղաց : Անգործարան մարմնոց բիւրեղները կազմող հիւլէից տեղ՝ կը բրոնեն գործարանաւորաց մէջ բջիջքն : Արդ բոյսն կատարելագոյն բիւրղացումն կամ գործարանաւոր բիւրեղ մ'ըլլալով՝ յայտ է որ իր ձեն ալ նիւթոյ և զօրութեան արդասիք է : Այս բանս պարղապէս կ'երեի բուսոց զանգուածը կազմող տարերքը կամ սկզբունքը զննելով :

Իւրաքանչիւր ցեղի կամ տոհմի բուսոց ուրիշներէն աւելի կամ պակաս տեսակ մը տարր կայ . զոր օրինակ , ընդեղինաց մէջ ընդայինն , պղպեղաց մէջ պղպաղելայինն , տորոնից մէջ կարմրաներկ նիւթն , և այլն : Այս բանս չէր կրնար ըլլալ եթէ բուսոց տպաց և քիմիական սկզբանց մէջ սերտ յարաբերութիւն մը չըլլար : Համանման բաղադրութիւնք համանման ալ ձեւը կ'արտադրեն . համանման բաղադրութիւնք և ձեւ ալ համանման կարողութիւն կը պատճառեն . նուազ նման բաղադրութիւնք և ձեւ՝ նուազ նման կարողութիւն կամ ներգործութիւն : Ապա զարմանք չէ որ բուսոց զանազան ցեղքը ալ իրենց զանազան տպաց մէջ նոյն կամ նուազ նման տարր քաշեն , որով բջիջները կազմեն :

Բուսոց սննդառութիւնն ալ կը հաւաստէ զայս : Ամեն բոյս անհրաժեշտ կը կարօտի որոշեալ քիմիական տարերաց՝ կանոնաւոր կերպով աճելու համար : Օրինակ առնունք վարսակի բոյս մը . առանց գայլախազուտ դետնի չի կրնար սա բաւական ոյժ առնուլ հաստատուն կենալու համար , հապա ցողունն կը պառկի , կը դեղնի , առանց

կրային հողոյ՝ հազիւ երկրորդ տերեն արձակած՝ կը մեռնի . առանց սոտայի կամ բոդասի՝ հազիւ կրնայ երեք մատքարձրանալ . առանց պաղեղային հողոյ՝ նիհար և գետնամած կը մնայ . առանց փոսփորի՝ շիտակ և բարեկազմ կը կենայ , բայց տկար և անպտուղ կը մնայ . առանց երկաթի՝ դեղնած տկար և անկանոն կը մնայ , իսկ երկաթով՝ կ'առնու իր թանձր կանաչ գոյնը , կը բարդաւաճի և կ'ուժովայ . առանց մանկանէզի՝ չի կրնար կատարեալ աճումն առնուլ և քիչ ծաղիկ կը բերէ : — Հասարակ կաղամբն զանազան տեսակ աղբերով կամ պարարտութեամբք մնուցած՝ զանազան ձեւ , տեսակ ու համ կ'առնու . այսպէս եղած են և բողեք , որք 'ի սկզբան մէկ ձեւ կամ տեսակ էին : Անմշակ և ինքնարեր բոյսք ալ այս օրինօք կը ձեւանան . ինչուան անապատի բոյսք ալ , որք իրենց աւազուտ գետնին համեմատ խիստ և չոր են , որովհետեւ գայլախազուտ թթուն է զիրենք տողորողն . ընդհակառակն ջրափանց , ծովափանց և եղտիւրից բոյսք՝ թանձր և մսուտ են :

Ըստ զանազան քիմիական հանգամանաց ներգործութեան՝ բուսոց բջիջք ալ զանազանապէս կը կերպարանին , կամ զանազան ձեւեր կ'առնուն : Գիտենք որ իբրև 60 տեսակ սկզբնական տարերք կան , (ինչպէս թթուածին , ածուղ , աղօղ , ծծումբ , քլոր , պրոմ , զինկ , իօտ , և այլն) . որոց բաղադրութեամբք կազմին ամենայն մարմինք բուսականք և կենդանականք : Ըստ զանազան չափով և թուով խառնուածոյ տարերաց՝ զանազան զանգուածք կամ նիւթք կը կազմին և կերպարանին . յորմէ և զանազան դաս և տեսակ կ'որոշուին և դասակարգին : Այսպէս և բոյսք իրենց պտղոյն , ձեխն և թուոյն համեմատ կ'որոշուին և կը դասուին իբրև 200 խումբ կամ Տոհմ (Famille) . օրինակի համար ամենէն նախատիպները յիշելով , ջրիմուռք , քարաքոսք , սունկք , լոռք , խարձք , սէզք , արմաւենիք , կոնաձեռք , բանջարեղէնք , և այլն :

Նման տարերաց ամենէն պարզ բաղադրութեամբ կը կազմի անհատն բուսական, որ է ժողով մը հաւասար անդամոց . ուրիշ տարերաց քիչ մը տարբեր բաղադրութեամբ կազմեալ անհատք ալ ուրիշ ժողով մը կ'ընծայեն . և այսպէս քանի մը պարզ բաղադրութեամբ կազմեալ ժողովք՝ կը բովանդակին՝ ի ցեղ մի (Genre) . իրամէ պարզ զանազանեալ ցեղից ժողովն ալ կազմէ զջոհմն :

Հետաքննական խնդիր մը կը ծագի այս բաժանմունքս ըրած ատեն, թէ ինչէն է որ ամեն ցեղը բուսոց հաւասար թուով տեսակներ չունին . զոր օրինակ, ինչու միայն տեսակ մը դեղձ կայ, զղեար երկու տեսակ, սերկեիլ երեք տեսակ, իսկ կողուկք (solanées) 900 տեսակ : Ասոր ուղղակի պատասխան մը չեմք կրնար տալ . այլ հարկ է դիմել՝ ի տարրաբանութիւն, ուր կը տեսնեմք որ ըստ թուոյ տարերաց կազմին զանազան բաղադրութիւնք . զոր օրինակ երկու տեսակ բաղադրութիւն կայ երկաթոյ ընդ թթուածնի, մէկն իբրև 4 : 1, միւսն իբրև 4 : 1 1/2 . հինգ բաղադրութիւնք մանկանէզի, և այն : ինչպէս որ՝ ի տարրակազմութեան՝ տարերաց զանազան որոշեալ յարաբերութեամբք կ'ըլլան զանազան բաղադրութիւնք, ի բուսականս ալ գործարանաց զանազան որոշեալ յարաբերութեամբք . և ամենքն ալ քիմիականբնական օրինքը : Ամենէն պղտիկ մասնաւոր յատկութիւն մ"ալ կրնայ զղալապէս ներդործել բուսոց սննդառութեան վրայ . զետնին արտաքին հաստուածն, խտութիւնն, ծանրութիւնն, գոյնն, և այն, կրնան մեծ աղդեցութիւն ունենալ անոր վրայ . վասն զի գետնին գոյնէն կը կախուի անոր ոյժն՝ զլոյս անդրադարձընելու, ջերմութեան ճառագայթներն յինքն ընկղմելու . իր խտութենէն կախուի կազերը ծըծելն, որով և օդոյ յարաբերութիւնն ընդ բուսոց : Մի և նոյն տեսակ բոյսն նոյն զետնի վրայ զանազան կլիմայից տակ, կամ զանազան կերպով դարմանեալ՝ զանա-

զան ալ արգասիք կը բերէ, ինչպէս կը տեսնենք յայզիս և 'ի ծխախոտն : Հարկ էր այսպէս զանազանիլ կամ այլայլիլ բուսոց, որ այնպէս փափուկ յօրինուած ունին . երբ կը տեսնենք որ կոշտ բիւրեղն անգամ կը զանազանի ըստ այլ և այլ յատկութեանց : Նոյն Պուրկոնեայի որթն և նոյն Քուպայի ծխախոտն օտար կլիմայից տակ՝ կ'օտարանան կ'այլային, կը յոռանան . յայտ է թէ օդոց և զետնին բնական ու քիմիական յատկութեանց տարբերութենէն :

#### ԿԱՐՄԱՎԻ ԵՒ ԲՈՅՍԻ

Բոյսն միայն հողու մէջ չի սնանիր այլ և յօդս . ամենայն զանազանութիւնք հողոց բանի չեին 'ի գալ՝ եթէ կլիմական հանգամանաց մէջ ալ զանազանութիւն չըլլար . այս օդոց և հողոց զանազանութեանց միութեամբք է որ երկիրս այսքան զանազան տեսակ բոյսեր և կենդանիներ կը տածէ . առանց այս զանազանութեանց՝ բոյսք և կենդանիք ալ միաձեւ միատեսակ կ'ըլլային : Բայց ինչէն կը պատճառի այս կլիմական աղդեցութեանց զանազանութիւնն : — Գիտեմք որ ամենայն փոփխական աղդեցութիւնք գօտեաց և եղանակաց երկրագնտիս՝ կը ծագին իրառանցքին խոտորնակ դրքէն նկատմամբ առ արեգակն . եթէ առանցքն ուղղաղիր ըլլար, կամ թէ երկրագունտն հասարակածին հետ զուգադիր ըլլար՝ արեգակն միշտ նոյն կերպով պիտի լուսաւորէր երկրիս երեսը, և բոլոր տարին նոյն լոյսն ունոյն ջերմութիւնը պիտի տար . մշտնջենաւոր գարուն մը պիտի ըլլար : Բայց ինչ գարուն . — գիշեր ու ցորեկ միշտ հաւասարաշափ . և բևեռներուն կողմը մշտնջենաւոր ցորեկ մը պիտի ըլլար . արեգակն միշտ ուղղահայեաց պիտի ըլլար հասարակածին վրայ, և երկու բարեխառն գօտեաց միջոց այնպիսի տաքութիւն մը պիտի աղդէր՝ որ ոչ բոյս ոչ կենդանի պիտի չկարենային դիմանալ . իսկ բևեռային երկիրներն՝ թէպէտ և միշտ լուսաւոր՝ այլ արեւուն կողմնակի

ճառագայթներէն զրեթէ ամենեին տաքութիւն պիտի չառնուին . բարեխառն գօտեաց երկիրներն՝ յիրաւի մշտնջենաւոր գարուն մը կ'ունենային , այլ ձանձրանալի , ինչպէս հասարակածին տակ եղած Ամերիկոյ Անտեայց 10000 կամ 12000 ոտք բարձր լեռնադաշտերը , ուր գրեթէ միշտ 4°էն ինչուան 9° Ռէօմիւրի հաստատ ջերմութիւն կ'ըլլայ . այնպիսի անփոփոխ համաձև գարունն տեսակ մը թմրութեան մէջ պիտի ձգեր զկենդանիս . վասն զի ուր որ փոփոխութիւն չկայ՝ չըլլար և գրգռումն , շարժումն և կեանք :

Երկիրս բնակուելու համար հարկ էր որ ունենայ այն դիրքը զոր ունի , այսինքն իր առանցքն իր մէջ միշտ զուգահեռական ըլլալով խոտորի իր արեգակնային շրջանակին . անանկ որ առանցքին և շրջանակին մէջ ձևացեալ անկիւնն ըլլայ 66 $\frac{1}{2}$  , իսկ շրջանակին և հասարակածին միջոց՝ 23 $\frac{1}{2}$  : Ասով արեն ալ չի կը բնակուելու հաւասար չափով և տեսողութեամբ լուսաւորել և տաքցընել երկրիս մէկ երեսը : Երկիրս շրջադարձութեան ատեն միշտ նորանոր կէտեր կ'ընծայէ անոր . ասով է որ երբ բնեռաց մէկն կը լուսաւորի՝ միւսն 'ի խաւարի մնայ : Այս լուսոյ և ջերմութեան անհաւասարութիւնն երկրիս կենդանականութեան անհրաժեշտ օժանդակին է . ասկէց կ'ըլլան Եղանակք . և այն չնչին երեցած երկրիս շրջանակին խոտորմանէն կը ծագին գործարանաւոր էակաց կեանք . բոլոր բուսոց և կենդանեաց բազմակերպ զանազանութիւնք՝ այն երկրիս առանցքին փոփոխութիւն անկեան վրայ հաստատուած են . անկէց է գարունն և աշուն . անկէց ծաղկանց դալն և անցնիլն , թռչնոց երթեւեկն : Քիչ շատ անկէց են և ազգաց և ժողովրդոց կենաց և անտեսութեան զանազանութիւնք ալ :

Գիտենք ամառուան և ձմեռուան պատճառն , երկրագնտիս իր ձուածե շրջանակին մէջ յարսէն խոտորնակի հեռանալով , որով իր մէկ երեսին վրայ օրերն կը կարճընան , լոյս և ջերմու-

թիւն քիչ կ'ազդեն , ցրառութիւնն կ'աւելնայ և կը մնայ , մինչդեռ երկրիս միւս երեսին վրայ հակառակն կ'ըլլայ . ինչուան որ դիրքն փոխուի : Այս այլ դիտուած է որ ցամաքին վրայ աւելի շատ ձիւն կու գայ ձմեռը և կը պազեցընէ զմինոլորտը , որով ձմեռն կ'երկըննայ , գարունն կ'ուշանայ . իսկ կղզեաց մէջ աւելի տաք կ'ըլլայ , որովհետեւ ծովս չի թողուր ձեանց դիզուիլը , և իր շոգիաց մամբ արձակած ջերմութեամբ՝ կը բարեխառնէ զօդս : Սակայն ցամաքն որ աւելի սաստիկ ձմեռ կ'ունենայ՝ ամառն ալ աւելի տաք կ'ըլլայ . որովհետեւ իր երեսն աւելի դիւրաւ ջերմութիւն կ'առնու քան ծովս . որով և կղզեաց ամառն աւելի բարեխառն է : Այս պատճառաւ է որ՝ հարաւային բևեռին կողմը աւելի շատ և ճոխ բուսաբերութիւն կ'ըլլայ քան 'ի հիւսիսայինն . զի այն աւելի շատ ջրով շրջապատած է քան զայս :

Գետնին բարձրութիւնն ալ մեծ աղղեցութիւն ունի եղանակաց և բուսաբերութեան վրայ . որովհետեւ մինոլորտին ճնշումն կը նուազի բարձր սեղեաց վրայ , և սառն կը կազմի ու կը մնայ . նուազմամբ մինոլորտոյ ճնշման՝ բուսոց ջրային մասունքն աւելի շուտ ու շատ կը շոգիանան , և աւելի ընդունակ կ'ըլլան լուսոյ և ջերմութեան՝ արեսուն ճառագայթից ուղղակի ազդեցութեան տակ . ասով է որ Ալպեան բոյսք կարճ ամառուան մէջ ալ գեղեցիկ դալար և աճումն կ'առնուն : իսկ սառին ձևանալն՝ կ'երկարէ զձմեռն , բուսաբերութեան ժամանակը կ'ուշացընէ , և շուտով կ'ընէ ցուրտէն 'ի տաք անցնելու փոփոխութիւնն . այնպէս որ լեռնային երկիրներ գարուն և աշուն դրեթէ շրլար :

Օդոց պարզութիւնն կամ թանձրութիւնն ալ մեծ ազդեցութիւն ունի բուսաբերութեան վրայ . ամպամած երկինք և պայծառ երկինք մը տարբեր ազդեցութիւն ունին . ամպամած երկինքն՝ շուք ըսել է , և շրքի տակ բոյսք աղէկ առաջ չեն 'ի դալ : Ընդ երկար արեսուն ուղղակի ճառագայթից տակ

ալ բոյսք կը լըլկին . ինչպէս որ մեր կլի-  
մայի տակ ջերանոցներու մէջ պահուած  
բոյսերը կը տեսնենք . զոր պարախղ-  
պանք կը ստիպուին պաշտպանելյարեէ .  
իսկ անոնց բնիկ երկիրը՝ Անտիլեան  
կղղեաց մէջ ցորեկը թեթև ամպեր ա-  
րեւն երեսէն անցնելով կը բարեխառ-  
նեն օդը , և բոյսերն անմնաս կ'ուռճա-  
նան : Բուսոց սննդառութիւնն կամած .  
խային թթուին փոփոխութիւնն սահ-  
մանեալ բարեխառնութիւն մը կը պա-  
հանջէ . երբ անկէ շատ աւելի կամ պա-  
կաս ըլլայ՝ բոյսք մնաս կը կրեն : Այս  
պատճառէս է տեղ տեղ բուսոց տեսա-  
կաց նուազիլն . զի ամեն բոյս հոն կը  
գտուի՝ ուր որ իր կենաց կամ սննդեան  
յարմար պայմանք կան : Ասկէց է նաև  
զանազանութիւն ամառնային և ձմեռ-  
նային բուսոց . զի ըստ աստիճանի տա-  
քութեան կամ ցրտութեան՝ առաջ կու-  
գան և կը յաջորդեն :

Ինչպէս ստէպ յիշեցինք՝ ջերմութեան  
հետ լցուն ալ կարեոր պայման մ'է  
բուսաբերութեան . արեւն ճառագայ-  
թից մէջ ալ երեք զանազանութիւն  
կ'ընեն գիտնականք . ջերմային , լուսա-  
յին և քիմիային : Ջերմային հարկաւոր  
է բուսոց ամեն կենդանական ներգոր-  
ծութեանց համար . առանց տաքու-  
թեան և ջրոյ՝ սննդառութիւն չըլլար . ա-  
ռանց քիմիային ճառագայթից ալ բոյսք  
չեն բողբոջիր . առանց լուսայնոց ալ  
չըլլար փոփոխութիւն թթուածնի և  
ածխածնի, որովք բոյսն կ'առնուիր բջը-  
ջաց կազմող նիւթը և կ'արտաքսէ զա-  
մելորդս : Լուսային և քիմիային ճառա-  
գայթք կը պատճառեն բուսոց գեղեցիկ  
գոյները , բայց ծաղկաբերութիւնը և  
պըտղաբերութիւնը կ'ուշացընէին՝ եթէ  
ջերմային ճառագայթք ալ չաղղէին :  
Լուսոյ այս տեսակ տեսակ ներգործու-  
թիւնք սերտ յարաբերութիւն ունին ե-  
ղանակաց և բուսոց պարագայութեան  
հետ . քիմիային ճառագայթք՝ գարնան  
հետ , վասն զի այս ատեն կը բողբոջին  
բոյսք . 'ի յառաջել եղանակաց՝ կը զօ-  
րանան ջերմայինք՝ (որ լուսահայելոյն  
մէջ կարմիր ճառագայթից մերձաւորքն

են) և կը դիւրացընեն զծաղկումն և  
զպտուղս . աշնան մօտ կը նուազին լու-  
սային և քիմիային ճառագայթք , կ'ա-  
ռաւելուն ջերմայինք :

Լոյս , ջերմութիւն , խոնաւութիւն  
ճնշումն մթնոլորտի , ասոնք են կլիմա-  
յից՝ և հետևաբար բուսոց վրայ զլիսա-  
ւոր աղղիչք . ջերմութիւնն և խոնաւու-  
թիւնն կը լուծեն զնիւթս և կը սկսին  
այլաձեւութեան երեսոյթը , զոր կ'ա-  
ռարտէ լոյսն . մթնոլորտային ճնշումն  
կը յաւելու կամ կը նուազէ բուսոց շո-  
զիացումը , ըստ տկարութեանն՝ ինչ-  
պէս 'ի վերայ լերանց , և ըստ զօրու-  
թեանն՝ ինչպէս 'ի հովիտս . ասոնց  
վրայ խոնաւ օդոյ պէս է , անոնց վրայ՝  
չոր օդոյ : Ասոր համար լերանց և չոր  
երկիրներու բոյսք չորկեկ ցողուն և աե-  
րեւ ունին , աւելի կեղեսոտ են և նուազ  
հիւթոտ . բայց աւելի ալ հոտ և շաքար  
ունին : Նոր Հոլանտայի ամենէն չոր  
կողմերը՝ կ'աճին առատապէս մրտենիք  
և հոտաւոր բոյսք , ինչպէս ընդհան-  
րապէս չոր ցամաք լերանց վրայ : Այրե-  
ցեալ զօտւոյն չոր օդոց տակ շատ բու-  
սոց վրայ տեսակ տեսակ շաքարային  
անուշահոտ քրտինք կամ արտաթորք  
կը գոյանան . հարաւային Եւրոպիոյ ,  
Եգիպտոսի , Միջագետաց , Նոր Հո-  
լանտայի տաք երկիրներու մանանայք՝  
այսպիսի արտաթորք են . աւելի բարե-  
խառն երկիրներու մէջ ալ ամառուան  
մեծ տաքերուն՝ նման իմն շաքարային  
մանանայ կ'երեսի լորւոյ (tilleul) , Սպա-  
նիոյ Եղրեսանոյ (syringa) վրայ , ինչուան  
ցորենի հասկաց վրայ՝ ցողոյ հատից նը-  
ման : Եթէ մթնոլորտի սաստիկ չորու-  
թեան հետ՝ օդոց տկար ճնշում ալ ըլ-  
լայ , հոտաւոր բոյսք՝ որ սովորաբար  
մանրիկ տերեւ կ'ունենան՝ կը քաշուին  
կը ճղճղին և բրդոտին :

Որովհետեւ եղանակաց և զօտեաց  
կամ կլիմայից պատճառն նոյն է , մեր  
մի և նոյն բարեխառն զօտւոյ տակ ալ  
կը ընանք անոնց զանազանութիւնը տես-  
նել բուսոց վրայ . այսինքն՝ որչափ որ  
ամառն մօտենայ և զօրանայ՝ հարաւա-  
յին կողմանց բոյսք կը սկսին երենալ .

որչափ որ ձմեռն մօտենայ և զօրանայ՝ ցրտային կողմանց բոյսք կը յաջորդեն. եթէ ոչ նոյն բոյսք այն հակառակ կողմանց՝ գոնէ անոնց նմանիքն. զոր օրինակ այրեցեալ գօտեոյն մեծամեծ նիմֆայից կամ ջրիհարսն շուշանաց տեղ՝ մեր բարեխառն գօտեաց ամառան տաքուն ալ կը բացուին ջրային շուշանք։ Այսպէս լեռներն ալ ցրտային երկիրներու գաղափար կու տան. որչափ որ աւելի վեր ելլուի՝ այնչափ բոյսքն ցուրտ կլիմայից բուսոց կը նմանին. իսկ դաշտք՝ հարաւային բուսոց նմաններ կը բերեն։ Ըսել է որ երկրիս թէ ըստ հորիզոնական դրից և թէ ըստ ուղղահայեաց դրից գետնին՝ կը զանազանի բուսաբերութիւնն, կամ կ'որոշուին գաւառք բուսոց։

## ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԲՈՒՍՈՑ

Վերը ըսածներնէս յայտնի եղաւ որ ինչպէս կլիմայք կը զանազանին երկրիս վրայ՝ այնպէս ալ անոնց մէջ եղած բոյսք, և թէ երկրիս զանազան կողմերը զանազան բոյսք ալ պիտի ըլլան. սակայն կը տեսնենք նոյն տեսակ բոյսեր՝ որ երկրիս զանազան և հեռաւոր կողմերը կը գտուին. ինչպէս եղած է ասոնց այլեայլ տեղ գտուիլն. — Ենթադրելով թէ 'ի սկզբանէ ալ այլեայլ կողմեր բուսած չըլլային նոյն տեսակ բոյսք՝ զանազան պատճառ կը գտնեմք անոնց տեղափոխութեան. և նախ բուսոց ինքնին ցրուելն՝ իրենց սերման կամ ընձիւղից հեռանալովս առջի տեղէն. իրաւընձիւղով հեռանալն աննշան բան մը կ'երեսի շատ բուսոց համար, որոց չորցած արմատին անմիջապէս քովէն կ'արձըկի նոր ընձիւղն կամ բողբոջն. բայց կան բոյսեր ալ, ինչպէս սէզն (Chiendent) որ շատ հեռու կ'արձըկէ իր ընձիւղը և շուտ կը յառաջէ։ Իսկ հունտք կամ սերմանիք անանկթեթեներ ալ ունին՝ որ հովերէն շատ հեռու տեղուանք կը քշուին. կան ալ որ ջրոց հոսանքով, գետերով, և ինչուան ծովու հոսանքը ալ հեռաւոր կողմեր

կ'երթան. ոմանք ալ կենդանեաց միջոցաւ կը տարուին յօտար աշխարհս։

Բուսական աշխարհին և բովանդակ իսկ երկրագնտիս ամենէն նշանաւոր երկութից մէկն է այս բուսոց գաղթականութիւնն. որովհետեւ կը հաւաստեն երկրաքնին բուսաբանք՝ թէ կան երկիրներ որ ամեննեին բնիկ կամ յատուկ բոյս չունին. ինչպէս իսլանտան՝ բոլոր եր բոյսերն առած է 'ի կրէնլանտիոյ և յեւրոպիոյ. բևեռային բուսոց շատն 'ի ձեռն թռչնոց տարուած են այն կողմերը։ Ամերիկոյ արևմտեան ափունքներէն հարիւրաւոր մղոններով հեռու և Հարաւային ծովէն ալ աւելի շատ հեռու կալաբրակոյ ըսուած 10 կղզեաց կոյտ մը կայ, որոց չորսին մէջ յամի 1839-43 չուքը նաւողն 256 տեսակ բոյս գտաւ, որոց 444 տեսակն կը գտուէր Արևմտեան չնդկաց մէջ. ասոնց սերմանքն ոչ հովով և ոչ թռչնօք կը ընային հօն երթալ. չուքը քննելով գտաւ որ բանամայի եղերքէն ծովու հոսանք մը, (որ ինչուան այն ատեն ծանօթ չէր) կու գայ ինչուան այն հեռաւոր արշիպեղագոսին մէջ, և կը բերէ յիշեալ բուսոց սերմանքը, տեսակ տեսակ ընդեղէններ և կողուկներ։ Ուրիշ կողմեր ալ ստուգուեցան բուսոց այսպիսի տեղափոխութիւնք։ Բայց այս ալ դիտնալու է, որ այսպէս տարագնաց բոյսք այն տեսակներէն են՝ որոց սերմանք գիւրաւ կը ծլին, և ծովուն ջրոց դիմանալու համար ամուր պատեաններ ունին։ — Չնդկային ովկիանու մէջ Մալազարի և Մալայեան կղզեաց կողմերը կ'երեւին ծփացող արմաւենեաց պտուղք զլիսու մեծութեամբ, ինչուան 20 լիալը կշռով, որք արևելեան Ափրիկոյ Աէչելեան կղզիներէն կու գան։ Ասոր հակառակ հասարակածին ծովու յորձանքն ալ որ յԱփրիկէ յԱտլանդական ովկիան կ'երթայ՝ Հարաւային Ամերիկոյ արևելեան ափունքը, անոր Պրազիլիոյ և կիւյանի բոյսերէն 40 կամ

1. Անոր համար կ'ըսուին Codoicea Sechellaram.

43 տեսակ կը բերէ Ափրիկիոյ արևելեան ափունքը :

ՅԵՒՐՈՎՍ ալ ինչուան Սկովտիոյ հիւսային ափունքը, ինչուան 'ի Հրուան շանն Հիւսիսոյ և յափունս իսլանտայ և Սպիտակ ծովու՝ Մեխիդոյի ծովածոցին յորձանք կու դան այլեայլ բոյաք՝ (Mimosa scandens, Guillandia honduo, և տեսակ մը դկուղ կամ լուբիա, Doli-chos urens): Սոյն այս ծովու յորձանքէն իմացաւ կոլոմբոս որ երկրիս անծանօթ մաս մ'ալ կայ. նոյն յորձանքն բերած է իուանտիոյ քանի մը տեսակ բոյսեր՝ որոց ազգակիցքն շատ աւելի տաք երկիրներ կը գտուին: Այս ծովային յորձանաց կամ ընթացից օրինօք կ'իմացուին թէ ինչու ծովափնեայ ծաղկունք շատ ընդարձակ կողմեր ցըրուած են. օրինակի համար, Հիւսիսային ծովու ափունքը կը գտուին բոյաք՝ որ Աղրիական ծովու եզերքէն ելեր են, տարածուելով՝ 'ի կղղիս իտալիոյ, 'ի փռանկաստան, Սպանիա, Բորդուդալ և յԱնգղիա. այսպէս ուրիշ բոյաք ալ Միջերկրականի ափրիկեան եզերքներէն կ'երթան ինչուան 'ի Գլուխն Բարեյուայ. ոմանք ալ Արևմտեան Հընդկաց այրեցեալ գոտիէն կ'անցնին հասարակածին տակէն և կ'երթան 'ի Պրեզիլ:

Ուրիշ զարմանալի պատճառ մ'ալ կայ բուսոց գաղթականութեան 'ի ծովեզերս. զոր օրինակ հիւսիսային գերմանիոյ ցած ափանց խարակաց և ժառից վրայ կը գտուին մամուռք և քարաքոսք, որք բուն ցամաքին մէջ չեն գտուիր. արդ ասոնք չեն կը ընալու ուրիշ տեղէ մ'եկած ըլլալ՝ բայց եթէ 'ի Սկանտինաւեան ափանց (Շուետ, Նորուեկիա, և այլն). բայց ոչ 'ի ձեռն յորձանաց, այլ ծփացող կամ թափառիկ գետնատախտերով (galet), այսինքն այն կտրուած և զատուած ժայռից և գետնի կտորներով՝ որք սառամանեզք պատեալ 'ի Սկանտինաւեան ափանց կ'ընկնին ծովուն մէջ, և քիչ քիչ սառն հալելով՝ ցամաք մասերն գերմանիոյ եղերքը յարուեր միացեր են. ուր ոչ միայն

լոռք և քարաքոսք՝ այլ և աւելի բարձր ցեղի բոյաք եկած են, ինչպէս չումն սուետեան (Cornus suecica), որ գաճաճ թզաշափի թուփ մ'է մեր սովորական չումին քով, և գտուի միայն յՈլտենպուրկ և 'ի Հոլշդայն, իսկ 'ի Շուետս սովորական բոյս մ'է:

Քաջածանօթ է հովերու թերով բուսոց տեղափոխութիւնն, որք ծաղկանց բեղնաւոր փոշին շատ հեռու տեղուանք կը ձգեն: Անկէց է ծծումբի անձրեւ ըսուածն ալ, որ է սովորաբար կոնածեւ ծառոց սերմնափոշին. ինչպէս որ մրրիկը հրաբղխից մոխիրը հարիւրաւոր մղոններով հեռու կողմեր կը տարածեն, այսպէս բուսական մասեր ալ: Շատերն տեսած են անշուշտ կանգառի կամ ոքողի տեսակ բուսոց հունտերը՝ որք փետրածեւ կամ անուածեւ մազերով օդուն մէջ կը թափառին, և անով կը պաշտպանուին ալ, անվտանգ ընկնալու հեռու գետին մը և հօն բուսնելու. կնձնիք, հացիք և նմանիք ալ անոնց նման մազոտ կամ փետրոտ հունտեր ունին, և նոյնպէս թոչելով կը հեռանան: Մամուռք և լոռք և ուրիշ գաղտնասեռ բոյաք ալ անանկ թեթև սերմեր ունին՝ որ հանքային փոշիներու հետ կը թոչին և անոնց մէջ կը բուսնին: Այս կերպով տանեաց վրայ մամուռք և քոսք կը պատեն. Ժայռից և որմոց ճեղքերու մէջ կը բուսնին պէսպէս խարձք և ճերմակ ու սեւ ձարխոտք, (որք մեր լեզուով կոչուին ևս Պառւուծար կամ Պառւուծեօշան, և Սկէզօրի մազ): Երբեմն ամբողջ բոյաք ալ հովով կ'ելնեն այսպիսի բարձր տեղուանք: Զրի ագուգայից մէջ բուսած մուռք ալ այս կերպով կու դան: Անուշ ջրոց մուռք ալ՝ ցամքելով և չորնալով իրենց մէջ ապրած սուզական մանրիկ կենդաննեզք՝ կ'երթան հեռաւոր կողմեր:

Աւելի յայտնի կ'երևին գետոց և առուաց հոսանք եղած գաղթականութիւնք բուսոց. գրեթէ ամեն բարձրէ իշած ջուրք՝ այն տեղի բոյսերէն մաս մը կը բերեն լերանց ստորոտը և դաշտավայրը. Ալպեան լերանց բուսոց շատն՝

այսպէս իջած են իրենց դաշտորէից մէջ . և աւելի մեծագոյն կերպով մը՝ Հիմաւ-  
լայեան գագաթանց բոյսք կ'երթան  
Գանգէսի անկիւնակղզւոյն վրայ , Ան-  
տեան բարձանց բոյսքն՝ Որինոդ գետոյ  
կղզեաց մէջ : Բարսնայի կղզիք (՚ի Բլա-  
գա Ամերիկոյ) գետոց հոսանօք ընդու-  
նած են իրենց դեղձեաց և նարընջե-  
նեաց ծառաստանները : Զայս դիտելով  
տեղ տեղ լերանց ստորոտը ողողեալ  
գետինները բուսաբեր կ'ընեն երկրա-  
գործք , լեռներէն իջած վտակներն՝ ուղ-  
ղելով այն կողմերը : Ընդհանրապէս  
գետեղերը ծածկող բոյսք գաղթակա-  
նութեամբ եկած են , որք եթէ տեղը  
յարմար չգտնեն՝ կը չորնան , և ուրիշ  
տեսակ բուսոց տեղ կու տան :

Կենդանեաց ձեռքով եղած բուսոց  
տեղափոխութիւնն աւելի հետաքննա-  
կան է : Երգեցիկ թուչունք՝ չումի կամ  
զողալի կարմիր պտուղները շատ կը սի-  
րեն , կը հանեն ինչուան աշտարակաց և  
կիսաւեր պարսպաց վրայ , հոն կը ձգեն  
կուտերը , և ծառեր կը բուսցընեն . ինչ-  
պէս անծեղք ալ դիհեաց թուփեր՝ ա-  
նոնց կորիզներով : Իսլանտայի բուսոց  
մեծ մասն ՚ի թուչոց բերուած է . Սէյ-  
լանի դարիսենին ալ տեսակ մը կաչա-  
ղակէ կը բերուի . նոյնպէս կ'ըլլայ մշկի  
բոյսն ալ : Հոռվմայ տիեղերահոչակ կո-  
լիսէոնին (ամփիթէատրոնին) վրայ 260  
տեսակէ աւելի բոյս զննուած է , որոց  
մեծագոյն մասն թուչուններէ սերմա-  
նած են : Ճեաւայի և Մանիլլեայ մէջ  
քաֆէ սերմանողն տեսակ մը մկնաքիս  
է , որ քաֆէի կանաչ պտուղները կը  
կլլէ և կուտերը ամբողջ կը հանէ . զոր  
ճեաւացիք խնամով ժողուելով՝ կը ցա-  
նեն , վասն զի շատ ընտիր կը համա-  
րին զայն : Ամերիկայի խաղողն (Phytolaca decandra) զոր բերին Փռանկաց  
Պորտոյի կողմերը՝ գինին գունաւորելու  
համար , բոլոր Փռանկաստանի մէջ և  
ինչուան ՚ի Պիւրենեայս տարածեցաւ ՚ի  
ձեռն թուչոց : Ասկէ ոչ շատ տարի ա-  
ռաջ Տանիմարգայի մէջ նոր տեսակ  
ցորեն մ'երևաւ , շատ հատաքեր , և  
գալուն կերպն իմացուելով՝ կոչեցաւ

թոշնացորեան . յամին 1847 Եւրոպիոյ  
260 կողմերէ խնդիրք եկաւ յէսլինկէն՝  
որ այս ցորենէն իրենց խաւրուի :

Ահա այսքան զանազան պատճառնե.  
ըով կը գաղթին և գաղթած են բոյսք,  
առանց մարդկային միջնորդութեան .  
սակայն յայտ է որ ալ աւելին ըրած է  
մարդ , կամաւ կամ ակամայ : Ակամայն  
շատ հեղ կ'ըլլայ ՚ի ծրվեզերս կամ ՚ի  
նաւահանգիստս , ուր և նոր կենդանիք  
անդամ կու գան նաւուք , առանց գի-  
առութեան նաւողաց : Եւրոպիոյ մէջ  
աւելի Փռանկաց և Սպանիոյ նաւահան-  
գիստները կ'ընծայուին տարաշխարհիկ  
բոյսք , իրենց տաք կլիմային ընդունե-  
լութեամբը : Իսկ ցամաքի մէջերն՝ յայտ  
է որ շատ հեղ կամօք և երբեմն ըստ  
դիպաց կը բերուին բոյսք օտար աշ-  
խարհաց . ինչպէս Ասիոյ շատ պատուա-  
կան արմըտիք և պտուղք բերուած են  
յԵւրոպա . հաւանօրէն բողկն ուրիշ  
արմըտեաց հետ խառնուած՝ եկած է  
յԱսիոյ , առանց գիտութեան բերողաց .  
Արջի ընդոյզն (Stramoiine) կարծուի որ  
գնչուք (Չինկեանէք) բերած են ՚ի գեր-  
մանիա : Վուշն , կանեփն , մեխակն և սև  
ցորենն թաթարստանի կողմերէն եկած  
են . երեքտերևուկն և շոմինն՝ Քրդա-  
ստանի կողմերէ . ոսպն , լուբիայն , սի-  
սեռն՝ կարծուին յԱրաբիոյ . վարունգ ,  
սեխ , ձմերուկ , և այլն , ՚ի Միջագետաց .  
պատուական ընդեղէնք ՚ի Միջին Ասիոյ .  
սալորենիք ՚ի կովկասեան գաւառաց և ՚ի  
Տաւրիոյ . այգին յարևելեան Ասիոյ . նշե-  
նին յարևելեան վրաց . կիտրոնին ՚ի Մա-  
րաց . նարընջենին ՚ի Չինաց . սերկեիլն ՚ի  
կովկասէ . բալն կամ կեռասին յափանց  
Պոնտոսի . ծիրանն ՚ի Հայոց . դեղձն ՚ի  
Պարսից . թթենին ՚ի Հայոց և ՚ի Չինաց .  
շագանակն ալ որ հիմայ ՚ի բոլոր Եւ-  
րոպա սփռուած է՝ յԱսիոյ եկած է , և  
նախ ՚ի Վիեննա տնկուած է . եղբեա-  
նին (Լէյլակ) ալ յամին 1562 բերաւ յԵւ-  
րոպա Պուղպէք բուսաբանն , որպէս և  
զկակաջն . բայց յամին 1640 Պարսկա-  
ստանէ բերուեցաւ այն տեղի եղբեա-  
նին . և մէկ ծառէ մը բազմացան աճե-  
ցան ամենայն նմանիքն յԵւրոպա : Այս-

աղէս եղած է, կ'ըսեն, և վարսաւոր կամ լալական ուռենին, ուսկից տունկ մը՝ ՚ի ջմիւռնիոյ խաւրուեր էր առ Բորբանաստեղծ անգղիացի. իսկ նարընջենեացնախատունկն (որ ՚ի Բորդուգալ տնկուելուն համար՝ յարենելս այն աշխարհին անուամբ կոչուի) դեռ 300 տարիէ վերջ ալ ողջ է, կ'ըսեն, լիզպոնայի մօտ ՚ի պարտիզի Սէն Լորան կոմսի: Հռովմայ Աւենտին լերան վրայ ալ (՚ի Ս. Սաբինա) 30 ոտք բարձր նարընջենի մը կայ, որ համարի մայր ամենայն հասարակ նարընջենեաց, և կ'ըսուի թէ Ս. Դոմինիկոս տընկեց ՚ի սկիզբըն ժգ դարու: Փռանկաստանի բոլոր թթենեաց նահապետն որ յամի 1500 տնկուած է՝ դեռ այս դարուս սկիզբն ալ կը սաղարթէր յԱլլան Մոնդէլիմար գիւղ: Նոր աշխարհին ընծայած բերքերն քաջածանօթ են. մայիզն, ծխախոտն, գետնախնձորն, ակասիայն, կանադայի կենափայտն (Thuya occidentalis), ոստատարած կաղամախն, և այլն:

Աւելորդ կը համարիմ ծաղկանց գաղթականութիւնը յիշել, վասն զի գրեթէ ամենուն ծանօթ է ծաղկասիրաց խնամքն՝ նորանոր ծաղկըներ բերել տալու և գարմանելու օտար երկիրներ և աննման կլիմայից տակ, որոյ համար և կը ստիպուին իրենց տեղւոյն սովորականէն աւելի տաքութեամբ ծաղկանոցներ պատրաստել. յիշենք միայն քանի մը. Հաւկատարն (Amaranthus) յԱսիոյ եկած է, ոեհանն ՚ի Հնդկաց, մշտափթիթ վարդն ՚ի Պենկալայ, հորդենսիայն ՚ի ծիաբոնէ եկած յամին 1788, ուսկից եկած է և գամելիա ՚ի ձեռն գամելի Յիսուսեան քարոզչի. տեսակ տեսակ խալանջք (Erica), արագլակտուցք (Pelargonium) և կակաջք ՚ի Հրուանդանէն Ափրիկոյ, ուսկից կուգան և հալուէք (Loes): Նորագիւտ Նոր Հոլանտան կը խաւրէ մրտենիներ և պատկառուկներ. Մեխիզոյ՝ թանձրամարմին բոյսեր (Cactus) և գեղեցիկ գէորգինա կոչուած ծաղիկը. Բերու և Զիլի՝ կը խաւրեն Ֆոռքսիա, վեղարա-

ւոր կոտեմ (Capucine), արեաշրջիկ (Heliotrope). Գալիֆոռնիա՝ վերապենաներ, և այլն: Ասոնց փոխարէն Եւրոպացիք ալ շատ տեսակ պիտանի բոյսեր, մանաւանդ ընդեղէններ մտուցին ՚ի Նոր աշխարհն, ոչ միայն իրենց կլիմայից բոյսերէն, այլ և արևելեան Ասիոյ, ինչպէս՝ լեղակ, շաքար, քաֆէ, պըղպեղ, կանեփ, այզի, և այլն:

Յայտ է որ այսպիսի փոխատնկութեամբ բուսոց՝ ոչ միայն կը զանազանի երկրին երեսն, այլ և երբեմն բոլոր թթենին կ'այլափոխի. ինչպէս ՚ի Գերմանիա՝ որ երբեմն բոլոր կաղնեզք ծածկուած էր՝ հիմայ միայն անոնց արմատներն և կոճղերն կը գտուին. և շատ տեղ՝ ոչ դարերով կամ շատ տարիներով առաջ, այլ իբր 40 կամ 50 տարի առաջ եղնենեաց և սոճեաց տեսակք փոխանակեր են զկաղնիս և զկնձնիս: Աւելի հիւսիսային աշխարհներ ալ (Դանիք, Շուետ, և այլն) լայնատերեւ ծառոց տեղ՝ սրատերեւ ծառք փոխանակած են հիմայ: Այս բանիս պատճառն է՝ երկու ցեղ ծառոց ալ ՚ի սկզբան հաւասար բուսնիլն, և յետոյ մէկուն աւելի բարգաւաճել կամ ուժովնալն, որ միւսոյն նուազում և մահ կը պատճառէ. թող մարդկանց գործակցութիւնն ալ, այս կամ այն տեսակ ծառերը կտրելով, կամ անտառները բանալով, որով թուփք կ'աճին և ծառոց տեղ կը բռնեն: Բայց երբեմն ալ կը տրուած ծառոց արմատք նոր ընձիւղներ տածելով գետնի տակ՝ յանկարծ իմն դուրս կ'արձըկեն և նորէն յերեան կ'ելնեն: Այսպէս զիրար կը փոխանակեն աւելի ստորին աստիճանի բոյսք և ծաղկունք ալ, և երբեմն զիրար կը խափանեն կամ կը խղղեն. և ծառոց համար ըսածնուս համեմատ՝ ասոնցմէ ոմանք ալ երբեմն տարիներով ծածկուելով՝ երբ յարմար հանգամանք գտնեն՝ նորէն կը ընան յերեան գալ: Եւ այս ամեն կերպով երկրին երեսն կ'այլայլի փոփոխութեան յաւիտենական օրինք: